ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

03.04.2014թ.
214-ի 9

Երեւանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվաբանական համալսարանի ռեկտոր
տիկին Գայանե Գասպարյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Գասպարյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները,

1. Իրավագիտություն եւ իրավագիտության ոլորտի առարկաներ (իրավունքի տարբեր ճյուղեր, իրավունքի պատմություն, իրավունքի տեսություն, դատավարական իրավունք եւ այլն) դասավանդող քանի՞ դասախոս (ներառյալ՝ սեմինարավարները) ունի լեզվաբանական համալսարանը,
2. Լեզվաբանական համալսարանում իրավագիտություն եւ իրավագիտության ոլորտի առարկաներ դասավանդող դասախոսներից (ներառյալ՝ սեմինարավարները) քանի՞սն են փաստաբան:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Սույն հարցման կարգավիճակին կարող եք առցանց հետեւել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի www.givemeinfo.am կայքում՝ հետեւյալ հղմամբ՝ http://givemeinfo.am/hy/case/1337/:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան